ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության

ծառայության պետ

Նելլի Դավթյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետի (ադմինիստրատիվ օգնականի) կողմից կատարված

աշխատանքների վերաբերյալ

(06.08. 25 թ. - 06.11.25թ.)

2025 թ. օգոստոսի 6-ից նոյեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ (ադմինիստրատիվ օգնական) Գայանե Վահանի Գրիգորյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ՄՔԾ պետի հրահանգով ներգրավված եմ եղել «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրին» առնչվող աշխատանքներում՝ նամակագրություն, թարգմանություններ, ՊՄԳ պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագրերի խմբագրում, մասնավոր գործընկերոջ թիմի հետ հանդիպումների օրակարգերի կազմում, մասնակցություն բանակցություններին, աշխատանքների ընթացքի վերահսկում և այլն:
- Ուսումնասիրել եմ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից ճամփորդական փաստաթղթերին ներկայացվող պահանջները, ներկայացրել տեղեկանք նոր անձնագրերում ծննդավայրի տողը ներառելու նպատակահարմարության մասին:
- Ակտիվ մասնակցություն եմ ունեցել անձը հաստատող փաստաթղթերի դիզայնին վերաբերող բոլոր քննարկումներին, ապահովել կապը մասնավոր գործընկերոջ և հայաստանյան մասնագետների միջև:
- Եվրոպայի խորհրդի «Տեղահանված բնակչության իրավունքների պաշտպանության ամրապնդում Հայաստանում» ծրագրի շրջանակում սեպտեմբերի 8-10-ը ՆԳ

նախարարի տեղակալ Ա. Ղազարյանի գլխավորած պատվիրակության կազմում այցելել եմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության միգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակ (BAMF), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի գլխամասային գրասենյակ:

- Սեպտեմբերի 10-12-ը ՊՄԳ ծրագրի շրջանակներում այցելել եմ մասնավոր գործընկերոջ՝ Ֆրանսիայի Դուե քաղաքում գտնվող արտադրամաս, ծանոթացել արտադրական գործընթացին և մասնակցել աշխատանքային հանդիպումներին IN Group ընկերության ղեկավար կազմի հետ:
- Աջակցություն եմ ցուցաբերել ՆԳ նախարար Ա. Սարգսյանի գլխավորած պատվիրակության՝ Չեխիայի Հանրապետություն այցի կազմակերպմանը, որի ընթացքում հաստատվել է նոր նույնականացման քարտի դիզայնը:
- Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ՄՔԾ պետ Նելլի Դավթյանի այլ բազմաբնույթ հանձնարարականներ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ (ադմինիստրատիվ օգնական) _____

Գ. Գրիգորյան «11» դեկտեմբերի, 2025 թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ «գերազանց»

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ

Նելլի Դավթյան

_____

«11» դեկտեմբերի, 2025 թ.